



10 ԿՈՊԵԿ

10 ԿՕՊ.



Ա. Աթեշն

# ԼԺԱԿ



1932

Թարգմ. Ա. Գ.



ՈՒՍՏՈՎ ՀԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

087.1  
m-32

Այ:

16744

16744



844453

Ա. Թաթու

23 JUN 2009

# Լ Ծ Ա Կ

Թարգմ. Ռ. Գ.

1.

Վեր, վար, վեր, վար, ուրախ շարունակվում ե խաղը.  
 և ում կդլրի գերանի վրայից. ով շատ կղիմանա: Ա-  
 մենից շատ ջանք եր գործ զնում Սենիկ Սուրենյանը:  
 — Տղաներ, — կանչում ե նա իր ընկերներին, — խըմբ-  
 վեցնք ծայրին, հուփ տվեք դեպի ինձ: Մոտեցեք, մո-  
 տեցեք ամենածայրին, թեպետ նրանք չորսն են, իսկ  
 մենք յերեք: Բայց ելի մենք կհաղթենք:  
 Սենիկը մտածում ե այսպես—նրանք մեկը  
 մյուսից հեռու յեն նստած, ցրված են ամբողջ գերանի  
 վրա, իսկ յես իմ տղաներին կհավաքեմ միասին գերա-  
 նի ամենածայրին և պարզ ե, վոր մենք կտանենք, այն-  
 պես հուփ կտանք վոր... դիմացիո միայն:

Զախ կողմի գործերը վատանում եյին: Հան-  
 կարծ տղաները հասկացան, թե բանն ինչում ե և իրենք  
 ել խմբեցին գերանի ծայրին:

Սենիկ Սուրենյանը գոռաց.

— Մեր վերջը յեկավ, նրանք ել խմբեցին գերա-  
 նի ծայրին, տարածությունը հավասարվեց, բայց չե վոր  
 նրանք շատ են:

Չեր վերջացրել Սենիկն իր վերջին խոսքը, յեր-  
 նույն վարկյանին գերանի ձախ ծայրը կպալ գետնին,  
 աջ ծայրը բարձրացավ դեպի վեր և Սենիկը ներկու ան-  
 դամ պատվելով ողի մեջ, գլորվեց գետին:

— Միալ ե, ճիշտ չե, — բացական ի՞ւ Քենիկը

մենք յերեք ենք, իսկ դուք չորս, դուք պետք ե մեկին  
վայր իջեցնեք:

**Մեկին վայր իջեցրին:** Խաղը շարունակվեց:

Բայց այս անգամ վոչ վոք չեր հաղթում, աւժեղը  
հավասար եյին: Յերկու կողմերն ել խմբվել եյին գե-  
րանի հակառակ ծայրերին: Թե աջ և թե ձախ կողմի  
տղաների քաշն ել համարյա թե հավասարվեց: Խաղը  
դարձավ անհատաքրքիր, ապա ամբողջովին դադարեց:

**Սենիկը վերադառնում ե տուն և հորը տալիս ե  
մի այսպիսի հարց՝**

— Հայրիկ, այս ի՞նչ բան ե, պարանից փայտ ե  
կախ արած հորիզոնական ձեռվ, փայտի մի ծայրից յե-  
րեք սլաք ե կախված, իսկ մյուս ծայրից չորս, բայց  
փայտը պահպանում ե հավասարակշռությունը:

**Հալը մտածեց, ժպտաց և տառյ.**

- Լծակ:
- Վոչ, չգտար:
- Լծակ!
- Վոչ, վոչ, չգտար:
- Իսկ դու զիտե՞ս, թե ինչ ե նշանակում լծակ:
- Լսել եմ, լսել եմ, բայց բուն իմտառը չզիտեմ:

## 2.

— Այսոր Լենինականին տրակտոր ենք հանձնում  
— ասոց Սենիկին հայրը ճաշի ժամանակ—մեր զոր-  
ծարանից ուղարկում ենք պատգամավորներ: Ընտրել են  
և ինձ:

**Սենիկն ականջները սրեց.**

- Իսկ ինչով եք մեկնում:
- Բեռնակիր ավտոյուվ:
- Իսձ ել կվերցնե՞ս:
- Գնանք, յեթե ցանկանում ենք

ծաշից հետո բեռնակիր ավտոն մոտեցավ տանը:

**Սենիկն ու հայրը դժվարությամբ տեղավորվեցին:**  
պատգամավորներ շատ եյին հավաքվել: Փողհարը փշեց  
շեփորը և ավտոն ուղկորվեց դեպի հարևան գյուղը:

**Քսան ըսպեյի ճանապարհ եր:** Յերբ պատգամա-  
վորները մոտեցան գյուղին, տրակտորը զարդարված  
ժապավեններով և պլակատներով կանգնել եր գաշտում,  
իսկ գյուղացինք շրջապատել եյին նրան: Սենիկը դժվա-  
րությամբ մոտեցավ տրակտորին: Յերկու բանվորներ  
տրակտորի մոտ ինչ վոր բան եյին անում:

«Յես զիտեմ թե ինչ են նրանք ուզում անել—  
մտածում ե Սենիկը—նրանք ուզում են տրակտորի հե-  
տեւի սոնիի վրա անցկացնել հավելյալ անիվներ»:

— Ե՞ն, — ասում ե բանվորներից մեկը—չե՞ վոր հան-  
դերձանքը (զոմլրատ) մեզ մոտ չի, դորձարանում ենք  
մոռացել: Մնում ե մի կերպ լծակի միջոցով զորձը  
զլուխ բերենք:

**Սենիկը լսեց «լծակ» խոսքը և զարմացավ:** Ծանոթ  
խոսք եր, չե՞ վոր հայրը գերանն այդպես անվանեց,  
իսկ գերանն այստեղ ի՞նչ գործ ունի:

Բանվորներն արկղներից սարքեցին հենարան, մի  
գերան զրին հենարանի վրա, այնպես վոր հենարանից  
մինչև տրակտորը գերանի կարճ կողմն ընկնի, իսկ հե-  
նարանից մինչև բռնելու տեղը յերկար կողմը Բանվոր-  
ներից մեկը հեծավ գերանի ծայրին և սեղմեց: Տրակ-  
տորի հետեւ անիվները հեշտությամբ բարձրացան ողի  
մեջ: Բանվորներն սկսեցին անցկացնել հավելյալ անիվ-  
ները:

— Քեռի ջան, թույլ տուր յես բռնեմ գերանի ծայ-  
րից—խնդրում ե Սենիկը:

— Ուժդ չի պատի, գեռ փոքր ես:

— Կպատի ուժ, քեռի ջան, ճիշտ եմ ասում, կը-  
պատի, յես միայն ոյս հենարան տրկը կմոտեցնեմ

տրակուռքին, այս ժամանակ գերանի ավելի յերկար մասը կանցնի իմ կողմը և ուժու կպատի այնքան, ինչքան և քոնը:

— Ճիշտ ե,— ասաց բանվորը—ուրեմն հասկանում ես լծակի նշանակությունը:



— Ինչպես չե, հասկանում եմ, իզուր տեղը չե, փոք ամեն օր «լծակ» ենք խաղում:

3.

— Ինձ ընտրել են պատգամավոր՝ Մոսկվա գնալու մայիսի 1-ի տոնի առթիվ—ասում են հայրը Սենիկին: — Յես ել մտածում եմ, թե արի Սենիկը դու գնա իմ տեղը: Յես ասում եմ բանվորներին, թե մի քանի անգամ տեսել եմ Մոսկվան, թող այս անգամ ել գնա իմ Սենիկը: Համաձայն ես, թե վոչ:

Սենիկն ուրախությունից վեր ցատկեց, դուրս վագեց փողոց ու գոռաց.

— Գնում եմ Մոսկվա, Մոսկվա յեմ գնում, Մայիսի մեկին!

Առավոտ վաղ պետք եր հավաքվել: Գնաց խանութ, ճանապարհի համար ուտելեղեններ գնելու, կոռպերատիվը փակ եր, իսկ սպասելու ժամանակ չկար, պատգամավորները կարող են հավաքվել կայարանում և նա կարող եր ուշանալ: Գնում ե Սենիկը Աքելի խանութը: Աքելը հետեւ դռնից ներս թողեց Սենիկին և սկսեց:

կշռել յերշիկ: Նայում ե Սենիկը կշռքին և տեսնում, վար կշռքի լեզվակները հավասարվեցին:  
— Իսկ քո կշռքն արդյոք ուղիղ ե:  
— Իհարեկ, միթե այսպիսի կշռքով կարելի յե խարել—ասում ե խանութպանը:  
Սենիկը պատասխանում ե նրան.

— Շատ հեշտ ե խարելը, կշռքը նույն լծակն ե, վորի վրա որորփառմ են դույլերը. յեթե այդ դույլակիր լծակը տեղից շարժես, պարզ ե, վոր հավասարակշռությունը կխանգարվի և դուքս կգա խարելայություն: Ապա մի ստուգիր:

— Հը, չինի՞ ուզում ես սովորեցնել թե վոնց ըստուգեմ: Բերանիցդ դեռ կաթի հոտ ե գալիս, իսկ դու ուզում ես մեծերին բան սովորեցնել: Մի սրա բոյին մտիկ տուր, տես թե ինչ ե ուզում:

Բայց Սենիկն այնպիսիներից չեր, վոր սկսած գործը չվերջացնի. նա մտածեց, մտածեց ու ասաց.

— Կշռքի մի թաթի վրա դիր 100 գրամ քար, իսկ մյուսի վրա 100 գրամ յերշիկ ապա և կերևա:

Խանութպանը չի համաձայնվում, իսկ Սենիկն ազմկում ե: Աղմուկից հավաքվում են մարդիկ:

— Ապա, ապա ստուգիր տեսնենք—ասում են Սենիկին այս ու այն կողմից:



Հնար չկա: Սենիկը վերցրեց յերկու հարյուր գրամանոց քարը և դրեց կշռքի յերկու թաթերին. աջ կողմի թաթն իջավ ցած:

— Ահա—դարձավ Սենիկն Աբելին,—հենց այս կողմն  
ել դու դնում ես յերշիկը, Սյս կողմի թաթը հենարա-  
նից ավելի հեռու յե: Տեսանք հո, քաղաքացիներ, թե  
ինչպիսի խարերան ե. կշեռքի ձախ կողմը դնում ե 100  
գրամ քար, իսկ աջ կողմը 90 գրամ ուտելիք և կշեռքը  
ցույց ե տալիս ուղիղ: Սյ քեզ խարերա: Հետ առ քո  
յերշիկը, առանց քեզ ել յուշ կղնանք:  
Զգելով յերշիկը, Սենիկը դուրս ե գնում խանութից:

4.

Մինչև Սենիկը զբաղված եր Աբելով, առելը բարձ-  
րացել եր և կոռպերատիվս արդեն բաց եր: Սենիկը ճա-  
նապարհի համար ուտելիքներ գնեց—հաց, պանիր և յեր-  
շիկ: «Այժմ դեպի տուն. վերցնեմ կապոց և դեպի կա-  
յարան: Կոռպերատիվի բակով գնամ, այսպես ավելի մոտ  
կինի»:

Սենիկը բակով անցնելիս նկատեց, վեր բանվորնե-  
րը սայլից պարկով գետնախնձոր են իջեցնում և դնում  
կշեռքին: Բայց սա բոլորովին ուրիշ կշեռք ե: Ունի մի  
փոքրիկ հրապարակ և հետևի կողմից կախված ե թաթը,  
վորի վրա դնում են քարերը: Սենիկը շտապում եր,  
բայց և այսպես կանգնեց, նայում ե ու զարմանում.  
պարկերը մեծ են, ծանր են, իսկ կշռաքարերը շատ  
փոքրիկ և չնայած դրան, այդ կշռաքարերը դերակշռում են:


Բանվորները վերցրին կշռեք:

Նրանցից մեկն ասում ե Սենիկին.

— Ապա, փոքրիկ, կանգնիր կշեռքին, տեսնենք ինչ-  
քան ե քաշդ:

Սենիկը կանգնեց, բանվորը կշեռքի թաթին դրեց  
յերեք կիլոգրամ, հետո ավելացրեց 500 գրամ և կշեռ-  
քի լեզվակները հավասարվեցին, կանգնեցին դեմ ու դեմ:  
— Քիչ ե, փոքրիկ, քաշդ 35 կիլոգրամ ե ընդամենը,

Իջավ Սենիկը կշեռքի վրայից ու դեպի տուն վագեց:  
— Ուր ես մինչև այժմ—բարկացավ մայրը—դե  
շտառ նստիր, թեյ լցնեմ: Հայրը շտապում եր գործի, իսկ Սենիկը հանգիստ  
չեր թողնում նրան:  
— Սպասիր, նախ քան գնալո՞ւ մի խնդիր տամ:  
այն ինչ ե, վոր ինքն իրենից տասն անգամ թեթև ե:  
Հայրը չի կարողանում լուծել:



— Չես կարող, բա ասում եյիր, վոր լծակի մասին  
ամեն ինչ գիտեա: Խնդիրիս պատասխանը կշեռքն ե.  
կոռպերատիվում մի տեսակ կշեռք կա. մի ուսը մյու-  
սից տասն անգամ յերկար ե: Կարճ ուսին փոքրիկ հրա-  
պարակ և շինված, սրա վրա կարելի յե ապրանք գնել  
և մարդ կարող ե կանգներ, իսկ յերկար ուսին շինված  
և թաթը, վորի վրա կշռաքարեր են գնում: Թաթին դըին  
յերեք ու կես կիլոգրամ կշռաքար, իսկ փոքրիկ հրապա-  
րակին յես կանգնեցի, այդ թիվը բազմապատկեցին տա-  
սի և գուրս ե գալիս, վոր իմ քաշը յերեսունհինգ կի-  
լոգրամ ե:

— Դե մի անգամից ասա տասնորդական կշեռք,  
թե չե այսպես ես բացատրում, վոր դժվար ե հասկա-  
նալ, կամ, ավելորդ խոսելու փոխարեն շտապիր, թե չե  
գնացքը քեզ չի սպասի:

5.

Վերջապես, Սենիկը պատրաստ ե մեկնելու, ինչ

վոր պետք եր հավաքեց ու դուրս յեկավ փողոց։ Սաս-  
տիկ շոգ եր, արևը վառում եր, վոշոտ եր ճանապարհը։  
Զեռնափայտը դրեց ուսին, կապոցը կախեց փայտից ու  
շարունակեց ճանապարհը։ Բայց դժվար եր, կապոցը  
ծանր եր, փայտը ցավեցնում եր ուսը։ Սենիկը տիրեց.  
շուրջն եր նայում, հարմար տեղ եր փնտում հանդբա-  
ռանալու համար։ Հանկարծ զգում ե, կարծես բեռը թե-  
թեվացավ։

— Այ քեզ բան, ճիշտ վոր թեթևացավ. այնքան հեշ-  
տացավ, վոր կարելի յե յերգել անգամ։ Բայց չե՞ վոր զար-  
մանալի յե, կապոցի միջից վոչ մի բան չեմ հանել,  
հապա ի՞նչպես թեթևացավ։ Կապոցն անց կացրեց փայ-  
տի ծայրին, փայտը մի քիչ հետ մղեց։ Այ քեզ հրաշք,  
կապոցը նորից ծանրացավ։

— Ընը, հիմա հասկացա. այ թե ինչումն ե բանը։  
Սենիկն ամբողջ ուժով առաջ քշեց փայտը և բե-  
ռը նորից թեթևացավ։

Դեմից մի գյուղացի յեր դալիս ուսին փայտ ուներ,  
իսկ փայտի ծայրին կապոց։

Հենց վոր Սենիկը հայացքը գցեց փայտին ու կա-  
պոցին, իսկույն կանգնեց ու բացականչեց։

— Լծակ, լծակ, լծակ։



Շարունակում ե Սենիկը ճանապարհը և ինքն ի-  
րեն հաշիվ տալիս։

— Եխ դու, Սենիկ, հիմարի դրույ։ Պարծենում ե-  
րիր, թե չի կարող լինել գեղք, վոր լծակը չնկատես,

բա ի՞նչպես յեղավ, վոր քո սեփական լծակը չնկատե-  
ցիր։ Չե՞ վոր իմ ուսը հենարան ե, իսկ փայտի յերկու-  
ծալրերը լծակի ծալրերն են։ Հենց սկզբից պետք եր  
այսպես ել անել. այսինքն, փայտի հետեւի մասն, ուր  
կախված ե բեռը, թողնելի կարճ, իսկ առաջին մասում  
բռնելի ամենածայրից։ Այսպիսով կթեթևացնելի կապոցա-  
թեվացավ։

Ուրախ յերգելով Սենիկը շարունակում ե ճանա-  
պարհը։

6.

Ահա և կայարանը։ Բայց ինչումն ե բանը։ Յերեսում  
են ծիփ քուզաներ, կրակի բոցեր, աղմուկի, իրարանցում,  
հավաքված ե ժողովուրդ։ Վառվում ե կայարանի պա-  
հեսուը։

Սենիկը վագեց դեպի հրդեհի վայրը։ Մոտենալ չեք  
կարելի. բոցերը խփում են յերեսիդ։ Ահա հարեւան գոր-  
ծարանի բակից դուրս պլծան հրդեհաշեջները։ Հրդեհա-  
շեջներից յերկուար ճարպիկ կերպով թռան սայլակից և  
արագությամբ սկսեցին զործելու Մոտեցան ծորակինն,  
ծածկոցը բարձրացրին և ամեն ինչ պատրաստ եր, մը-  
նում եր ծորակը բաց անել։

— Հեյ, Պետրոս, շուտ բեր բանալին. ծորակը բաց  
անենք։

Հենց նրանց կողքին կանգնած եր Սենիկը և շտա-  
պեցնում եր հրդեհաշեջներին։

— Ձեռքով դարձեք, ձեռքով։

— Ինքո փորձիր ձեռքով ծորակը բացել, հետո ու-  
րիշներին խորհուրդ տուր—ասաց հրդեհաշեջներից մե-  
կը զայրացած։

Իսկույն և յեթ Սենիկը չոքեց դեմին, յերկու ձեռք-  
ով բոնեց ծորակից ու ամբողջ ուժով փորձեց դարձ-  
նել. ձեռքերի կաշին պլոկեց, իսկ ծորակը տեղից չը-  
շարժվեց։

Հրդեհաշեջների մեջ իրարանցում ընկալվ. հայհոյում եյին մեկը մյուսին. բանալին մոռացել եյին տանը; Հրդեհի բոցերը քանի գնում շատանում եյին; Հանկարծ ծորակին մոտեցավ մի բանվոր:

— Տղերք, գործիքներս ինձ հետ են, ապա փորձենք, կարելի յե իմ բանալիներից հարմարեցնենք, թեև հրշեջային բալանիներ չեն, բայց կարող են հարմարվել: Նա զանազան մեծությամբ մի բանի բանալիներ շարեց գետին և սկսեց հարմարեցնել:

— Սա փոքր ե, սա մեծ ե. փոքր ե... ահա և գտա: Անցկացրեց բանալին ծորակին և դարձրեց. բայց... շուրը չի հոսում: Հրդեհաշեջներից մի քանիսը նետվում են բանվորներին ոգնելու, բայց իզուր, միայն խանդարում են իրար:

Նայում ե Սենիկը հրդեհի բոցերին և մտածում է՝ վորտեղից ճարի հարմար բանալի: Հանկարծ բանվորներից մեկը կանչում ե նրան:

— Այ տղա, բեր իսկույն այստեղ պատի մոտ ընկած այն խողովակի կտորը:

Բերում ե Սենիկը խողովակը բանվորին և մտածում ե. «Ինչի՞ն ե պետք խողովակը»: Բանվորն անց ե կացնում խողովակը բանալու ծայրին և ամբողջ մարմնով ընկնում ե խողովակի վրա: Ծորակը գառնում ե և շուրն ուժեղ հոսանքով ժայթքում կրակի բոցերի մեջ:

Կրակն արդեն հանգչում եր: Ժողովուրդն սկսեց ցրվել, իսկ Սենիկը կանգնած եր ծորակի մոտ ու մտածում եր:

— Այ քեզ լծակ, ճիշտ վոր լծակ ե. յեթե խողովակը չգտնվեր, ծորակն անհնարին կլիներ բաց անել: Ուրեմն այսպես. յեթե վերցնենք շատ յերկար լծակ, մեծ գործեր կանե նա: Յեթե յես ունենայի լծակ, վորի յերկարությունը համներ մինչև լուսին—ճիշտ եմ ասում,—նրան տեղից կշարժեյի:

Զանգի ձայնը հառավ Սենիկի ականջին: Նետի նըման նա թռավ դեպի կայարան, Բանվոր պատգամավորներն արդեն հավաքվել եյին, չկար միայն Սենիկի հայրը:

Բայց Սենիկը համարձակ հայտարարում ե, վորինքն ե հոր փոխարեն գնալու:

— Դե լավ, համաձայն ենք, բայց տես, կայարաններում հեռու չգնաս, թե չե հետ կմնաս — ասացին բանվորները:

Սհա և առաջին կայարանը: Սկսվում ե իրարանցում, ով հստում ե, ով իջնում: Զանգը տպին, շշակը սուլեց և նորից շարունակեցին ճանապարհը:

Հանկարծ բանվորներից մեկը բացականչեց:

— Տղերք, ես ինչ ե, Սուրենյանի վորդին չի յերեսում:

— Ցերկի հետ ե մնացել, հապա քանի անգամ ասացինք նրան: Բայց կարող ե մյուս գնացքով համնել:

Իսկ Սենիկն այդ ժամանակ հստած եր № 1 վագոնում, վորն անմիջապես շոգեկառքին եր կցված: Իեռնում, վորն անմիջապես շոգեկառքին եր, վոր այդ վագոնախորդ կայարանում նա նկատել եր, վոր այդ վագոնի գոները միջատ բաց են և վագոնի միջից ինչ վոր մուրճի ձայներ են լսվում, ծխնելույզից անընդհատ ծուխ ե բարձրանում:

Սենիկը հետաքրքրվեց, մոտեցավ վոր լավ տեսնի: Հեսց այդ վարկյանին լսվեց զանգը: Սենիկը չկորցրեց իրեն և իսկույն թռավ վագոնի մեջ: Նայում ե շուրջը և զարմանում: սա վագոնն չե, այլ իսկական արհետանոց, հսոցում վառվում ե ածուխը, փականագործը շիկացած յերկաթ ե ծեծում, խառածում են յերկաթի կտորներ և կապարով կպցնում են պղինձից ինչ վարմասեր:

— Հը, այ տղա, ինչու բերանդ բաց մնաց — հարցնում ե ծեծունի փականագործը—մենք հարվածայինել

ևնք, գնում ենք զյուղ, ցանքսի կամպանիային կոլխոզնիկներին ոգնելու, ինվենտարը՝ տափաններ, շարքացաններ, գութաններ, նորոգներւ։ Մի յերկու կայարանից հետո մեր վագոնը կարձակեն, մենք կնեանք, իսկ դուք կշարունակեք ձեր ճանապարհը։ Հիմա մենք մեր գործիքները կարգի յենք բերում, վոր ամեն ինչ պատրաստ լինի։

Կագոնի մեջ Սենիկը ման ե գալիս։ Ման ե գալիս և ուսումնասիրում ե արհեստանոցը, հետաքրքրվում և աշխատանքով։

— Քեռի ջան, ասա, ի՞նչով հս կտրատել այս յերկաթի կտորները։ Դյուզում մեր հարևանը մի մեծ յերկաթի կտորը ուզում եր վեց մանը կտորների բաժանել շատ չարչարկեց, կրակի մեջ ել տաքացրեց, կացինով ել զարկեց, բայց կացին ել վշացրեց և կտորներն ել հավասար չեղան։ Իսկ քոնը հավասար և կոկի են, կարծես զմելիյով կտրված լինի։

լծակ ե շինված, հենց վոր յերկար լծակի ծայրից քաշեն, ամբողջ ուժը կենտրոնանում ե դանակի ծայրին։

— Փայտ ել կկտրի այդ դանակը։

— Իհարկե, հապա ել ինչ լծակի դանակ ե վոր Ամեն ձեի կարող ե կտրել և քառակուսի և յեռանկյունի, վերջապես, ամեն ձեի։

Մոտեցան նոր կայարանին։ Հրաժեշտ տալով, Սենիկը դուրս թռավ կառամատույցին։

8

— Եհ, հիմա նրանց այնպիսի հանելուկներ տամ, վոր ամբողջ ճանապարհը զբաղվեն դրանով—մտածում և Սենիկը։

— Ուր եյիր, ինչո՞ւ հետ մնացիր, չե՞ վոր մենք քեզ դպուշացըինք վոր հեռու չգնաս։

— Նախ և առաջ իմ հանելուկները լուծեցեք, հետո կպատմեմ ձեզ թե ինչպես հետ մնացի և ինչպես հասա—առաց Սենիկն իր ուղեկիցներին։

— Մեծ բան, չե՞ վոր մենք զբա համար ունենք լծակային մկրատ—ծիծաղեց բանվորը և մոտեցավ մըկ-ըատին—այդ մկրատը այսպես ե շինված։ յերկու դանակ ունի, մեկը վերեկց, իսկ մյուսը ներքակց։ վերցրու մի կտոր յերկաթ և դիր մկրատի ներքեմի դանակին, սեղմիր կոթը և յերկաթը կես կլինի պանրի նման։

— Այ քեզ հրաշք, բացականչեց Սենիկը։


— Վոչ մի հրաշք չկա, լծակն ե այստեղ ներդում. յերկաթի կոթը յերկար ե և նրա ծայրում մի

— Առաջին հանելուկի։ Այս ի՞նչ բան ե, հենարանի վրա որորվում ե փայտի մեծ կտոր. փայտի մի ծայրի մոտ կանգնած ե մի բանվոր, նա հենարանից հեռու


յե. փայտի մյուս ծայրում տրակտորն ե գտնվում,  
վոր հենարանին ավելի մոտ ե. տրակտորը թեև ծանր ե,  
բայց բանվորը մի ձեռքով բարձրացնում ե տրակտորը:



— Յերկորդ հանելուկ: Հազար սա ի՞նչ ե. հենա-  
րանի վրա որորվող փայտի յերկու ծայրերին դրված  
են թասեր. յերկու ծայրից ել հավասար տարածություն  
և մուտք մինչև հենարանը. յերկու կողմի թասերին ել  
յեթե դնենք հարյուրական գրամանոց կշռաքարեր, թա-  
ռերը կ'կանգնեն հավասար բարձրության վրա:



— Յերրորդ հանելուկ: Իսկ սա ի՞նչ ե. հենարանի  
վրա որորվում ե փայտը, վորի ծայրից կախված ե կշռա-  
թաթ, մյուս ծայրին փոքրիկ հրապարակ ե, աջ կող-  
մում ինչ վոր դնես, ձախում տասն անգամ պակա-  
ցույց կտա. հրապարակից մինչև հենարանը տարածու-  
թյունը տասն անգամ պակաս ե, քան թաթից մինչև  
հենարանը:



— Չորրորդ հանելուկ: Իսկ սա ի՞նչ ե. ուսի վրա որոր-  
վում ե փայտ, վորի մի ծայրից կախված ե կապոց,  
իսկ մյուս ծայրը գտնվում ե ձեռքերում. յեթե փայտը  
ուսի վրայով առաջ քաշես, կապոցը կթեթեվանա, իսկ  
յեթե հետ մղես, կծանրանա:



— Հինգերորդ հանելուկ: Ահա և վերջինը. հենարանի  
վրա որորվող փայտի մի կողմի ծայրին կանգնած ե  
բանվորը, իսկ հենարանի մոտ գտնվում ե գանակը.  
բանվորը ձեռքով սեղմում ե, գանակը յերկաթը կտր-  
առում ե մանը կտորների:

Վագոնում բոլորը հավաքվեցին. շատ մտածեցին,  
չարչարվեցին և մինչև Մոսկվա հասնելը հազիվ կարո-  
ղացան լուծել: Բոլոր հանելուկների պատասխանը մեկ  
եր—լծակ: Բայց այն ել լուծեցին Սենիկի բացատրական  
նկարների շնորհիվ: Մոսկվան յերևաց, պատգամավորնե-  
րը սկսեցին հավաքվել:

— Այնքան գրաղվեցինք այս հանելուկներով, վոր  
իրերը ժամանակին հավաքել մոռացանք—ծիծաղում  
ելին բանվորները:

Կայարանում պլատէամավորներին դիմավորեցին  
Նվազով հսկ մյուս որը, յերբ Սենիկը շքերթով անցնում  
եր Կարմիր հրապարակով, նա տեսավ մի մեծ պլա-  
կառ, վորի վրա գրված եր—

«Հնդամյակը—սոցիալիզմի կտոռւցման հզոր լծակն ե»:



Ответственный редактор  
А. Г. Авакян  
За техредактора  
Р. Гюзелян

No 1954  
1932

Сд. в набор 20/XII—1931 г.  
Сд. в печать 29/XII — 1931 г.  
Об'ем  $\frac{1}{2}$  печ. листа  
Тираж 2000 экз.

Удэлнрайлита № 4749. Гав.-хн. тип. СККПО. Статформат Б6 125Х176. Заказ № 5806  
Гор. Ростов на Дону.

## «Ազգային գրադարան»



NL0143004

—3 592.

Х. О.

16744

1132/130



На армянском языке

С. РЕЙН

РЫЧАГ

Книгоиздательство  
СЕВЕРНЫЙ КАВКАЗ

ԳՐԱՎԱՀԵԱԾՈՒ ՌԱՍՏՈՎ.-ԴՈՒ,  
ՄՈՍԿՈՎ.ՍԿԱՅԱ. ՓՈՂ. 58  
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ԿԱՐԳՈՑԵՆՏՐ)